

պատմիչին, որ ութերորդ դարուն (775-786) Հայաստանի արարացւոց տուած բնահարկերուն գլուխը նշանակած է գորգեր ալ Հայաստանի բնիկ ուրիշ արտադրութիւններու կարգին, սապէս. «20 գորգ, 580 Փունտ բաքմ, 10,000 Փունտ սոււմահի (աղած ձուկ), 10,000 համեմուած ձուկ, 200 ջորի, 30 բազէ»⁽¹³⁾ :

Ծանօթութիւնը շատ լակոնական է հոս: Գորգերու տեսակին մասին ոչինչ կ'ըսուի: 20 հատ գորգ, թիւը ինքնին աննշան կ'երեւայ, բան մը որ կը ստիպէ կասկածեցնել վկայութեան կատարելութեան մասին: Գուցէ 20 ՀԱԿ պէտք է սրբազրել: Նոյն առեն 20 ՀԱՏ գորգերը կրնան շինուած ըլլալ շատ սուղ ու ճոխ նիւթերով, ինչպէս մետաքս, ոսկեթել, մարգարտաշար, նրբահիւս: Նման մեծարժէք գորգերու գոյութիւնը կը յիշուի Պարսկաստան Զ եւ է դարերուն, օր. «Սոսրովի Գարուն» կոչուած գորգը, որուն մասին գրքիս մէջ խօսուած է: Արար Սալիֆաներու գորգերու հաւաքածոներուն մէջ կը յիշուի նման գորգերու գոյութեան մասին: Սակայն ինչ որ մեզի համար աւելի կարեւոր է՝ ատոնք գոյութիւն ունէին նոյնիսկ Հայաստանի մէջ, ինչպէս որ տեսանք քիչ վերը Ե դարու ընթացքին: Աւելի վերջը Վարդան վարդապետ պատմիչը կը վկայէ որ «Փատուում առնու գԱնի յԱլփասլանայ, տալով նմա ոսկիակուռ ցկարս ծաղկոցի»⁽¹⁴⁾: Վկայութիւնը, ինչպէս որ կ'երեւի, մէկ հատ հիւսուածեղէնի մասին է, որ Հայոց մեծանուն, բազմաշէն, ճոխագոյն Անի «մայրաքաղաքին» իբր վաճառման փոխարժէք գին կ'ընդունուի երկու օտար տիրակալ-

(13) Արարների Հարկային Քաղաքականութիւնը Աւստական Հայաստանում: - Զ. Զօրեան: Զ. Ս. Ս. Զ. Պետ. Համ. Գիտ. Տեղ. Թիւ 2-3, 1927, Երեւան, էջ 342: Իսկ Սալիֆանի այս վկայութենէն օգտուած է նաեւ Տիար Ա. Սաղբեկան՝ Les Tapis à Dragons et leurs Origines Arméniennes.— Extrait de la Revue Syria, 1928, Paris, p. 239. սապէս. «Արար պատմիչ Իսկ Սալիֆան (775-786) Ը դարուն Հայոց կողմէ Պաղատի խալիֆաներուն տրուած հարկերու ցանկին գլուխը կը նշանակէ գորգեր: Ասիկա ցոյց կու տայ որ արդէն այդ շրջանին այս արտադրութիւնը տարածուած էր երկրին մէջ, եւ էր տեսակ մը աղգային ճարտարութեան»: Սակայն գորգերը Հայոց կողմէ Արարացւոց տրուած հարկերուն գլուխը էր նշանակուած ալ բնահարկերուն, այսինքն երկրին բնական արտադրութեանց գլուխը: Արարացւոց Հայաստանի վրայ նշանակած գանազան տեսակ հարկերուն գլխաւոր բնական է արծաթ կամ ոսկի դրամն իսկ էր: Զ. Զօրեան «բաքմ» բառին մասին հարցական նշան մը դրած է՝ Հիարենալով բացատրութիւն մը տալ: Ես կը փորձուիմ բառը ճշդել «բիւթամ» որ Գէորդ դպրի համաձայն կը նշանակէ «Մարմարիտն քար, որ է կիճ սպիտակ եւ վճիտ»: Գալով ձուկերուն՝ հաւանօրէն Վանայ եւ Սեւանի լիճերուն համարաւոր տառերն ու իշխանաձուկն ըլլան:

Ապուլ Ֆարաճ ալ ունի վկայութիւն մը՝ որ Իսկ Սալիֆանի վկայութիւնը կը յիշեցնէ մասամբ: Ֆարաճ 1048ին կը ժամանակագրէ. Սուլթան Տուզըրիլ պէկ, գեսպան զրկեց Հայաստանի կառավարիչ Պար Մառուանի, հրամայելով անոր իրեն ենթարկուիլ եւ իրեն հպատակ ըլլալ: Եւ Պար Մառուան յարգանք ընդունեց գեսպանը, եւ ան դեսպանին տուաւ 30 հակ ճոխ հիւսուածեղէններ, եւ 500 տիւար, եւ կախուելիք ծածկոցներ եւ վարագոյրներ վրաններու յատուկ, եւ տասը ջորի՝ ապրանքներով բեռնաւորուած», եւն.: (Աղլ. Թարգ. հատ. Ա. ին, էջ 206): Հիւսուածեղէնները անտարակոյս Արտաշատ-Գուրիի նշանաւոր մանարաններուն եւ գործանոցներուն արտադրութիւններն էին, որոնց մասին այնքան յաճախ կը լսուի արար պատմիչներուն մօտ: Զօրեանին ալ հայկական բնիկ արտադրութիւններ էին, որոնք նոյնիսկ Գրիգոր Նարեկացիի կողմէ անմահացուած են իր քաղաքացիութեանց մէջ:

(14) Պատ.: Վենետիկ, 1862, էջ 103: